«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Աստվածաշնչյան առակների դաստիարակչական նշանակությունը

Առարկան՝ Հայոց լեզու և Գրականություն

Հետազոտող ուսուցիչ՝ Հովհաննիսյան Անահիտ

Ուսումնական հաստատություն՝ Խ. Աբովյանի անվան թիվ 84 հիմնական դպրոց

Երևան 2022

Բովանդակություն

Հետազոտական աշխատանք 3
Ներածություն 4
Աստվածաշնչյան առակների դաստիարակչական նշանակությունը 5
Ինչի՞ մասին ես ուզում սովորել 5
Ո՞րն է թեման կամ հիմնախնդիրը 6
Ի՞նչ գիտես տվյալ թեմայի կամ հիմնախնդրի մասին 9
Եզրակացություն 15
Օգտագործված գրականության ցանկ 16

Հետազոտական աշխատանք

Թեմա- Աստվածաշնչյան առակների դաստիարակչական նշանակությունը

Ինչի՞ մասին ես ուզում սովորել- տարրական դասարաններում սովորողների խոսքի զարգացման հիմնական խնդիրները և աստվածաշնչյան առակների դերը նրանց մեջ լեզվազգացողության արթնացման և մշակման, մայրենի լեզվի բառապաշարի հիմնական ֆոնդի ուսուցման ձևերը և մեթոդները:

Ո՞րն է թեման կամ հիմնախնդիրը- Մանկավարժական փորձով հիմնավորել, որ աշակերտի խոսքի զարգացումը մայրենիի տարրական դասընթացի հիմնական նպատակներից է, ներկայացված սովորողների կապակցված խոսքի զարգացմանը միտված աշխատանքները միանգամայն իրագործելի են:

Ի՞նչ գիտես տվյալ թեմայի կամ հիմնախնդրի մասին- Խոսքային գործունեության ընթացքում կարևոր դեր է խաղում դրդապատճառը: Երեխայի համար խոսելը պետք է պատճառաբանված ու անհրաժեշտ լինի: Ուստի մեծ նշանակություն ունի երեխայի խոսքային գործունեության դրդապատճառների հարստացումը: Սա ենթադրում է, որ երեխայի խոսքը զարգանում է նրա ամենօրյա հաղորդակցման ընթացքում, այսինքն՝ երեխայի համար խոսելու, հաղորդակցվելու բնական և իրական դրդապատճառները պետք է լինեն շփվելու, իմանալու, տպավորությունները կիսելու: Ուստի երեխայի հետ շփումը, ինչպես նաև պարապմունքները պետք է կառուցվեն բնական հաղորդակցման վրա, քանի որ բնական հաղորդակցման ընթացքում հաշվի է առնվում երեխայի ցանկությունը, հետաքրքրությունները, ինչը խոսքային գործունեության բնական դրդապատճառներ է ծնում և բարձրացնում արդյունավետությունը:

Խաչվող հասկացությունները՝

- Խոսքի զարգացում,
- ակտիվ բառապաշար,
- արտադասարանային ընթերցանություն,
- տեքստի վերլուծություն:

Հետազոտության թեմային առնչվող բնագավառները՝

1. Աստվածաբանություն
2. Մանկավարժություն
3. Փիլիսոփայություն

Ներածություն

Թեմայի կարևորությունը: Ուսուցման զարգացնող գործառույթի բովանդակությունը անձի մտավոր զարգացումն է, իմացական որակների զարգացումն ու ձևավորումը: Երեխայի մտավոր զարգացումը ավելի արագ է իրականանում գիտելիքների ձեռք բերման ընթացքում, սակայն զարգացման աստիճանը մեծապես պայմանավորված է ոչ թե գիտելիքների գումարով, չափով, այլ ուսուցման գործընթացի կառուցվածքով և առանձնահատկություններով: Օրինակ՝ զարգացնող ուսուցման ընթացքում տեղի է ունենում աշակերտների զգայական ընկալումները, շարժողական, մտավորինտելեկտուալ, կամային, էմոցիոնալ, մոտիվացիոն ոլորտների զարգացումը: Հենց այդպիսին է նաև առակների ուսուցման գործընթացը, որը իրենից ներկայացնում համագործակցային ուսուցում և պահանջում է հնարավորինս ճիշտ և հստակ կազմակերպում:

Մանկավարժության մեջ ուսուցման գործընթացի կառուցվածքի վերաբերյալ ձևավորվել են տարբեր մոտեցումներ: Ուսուցման նոր՝ ճանաչողական գործունեության վրա հիմնված ուսուցման կառուցվածք է առաջարկում ամերիկացի մանկավարժ և հոգեբան Բենջամեն Բլումը: Ըստ նրա ուսուցման թաքսոնոմիայի (համակարգի)՝ ուսուցման գործընթացին հատուկ են 6 հիմնական աստիճան՝ գիտելիք, իմաստավորում, կիրառում, վերլուծություն, համադրում, կշռադատում կամ գնահատում: Առակը չափածո կամ արձակ փոքրածավալ ստեղծագործություն է, որն ունի այլաբանական իմաստ և բարոյախրատական բովանդակություն: Առակը բաղկացած է 2 մասից՝ սյուժեից և բարոյախոսությունից: Սյուժեն դեպքերի, իրողությունների սեղմ շարադրանքն է, իսկ բարոյախոսությունը՝ առակի սկզբում կամ մեծ մասամբ վերջում արտահայտված եզրակացությունը: Առակի հերոսը մարդն է, ում կյանքի, բնավորության հոռի և բացասական գծերը ծաղրվում են այլաբանորեն:

Հետազոտություն նպատակը: Աշխատանքի նպատակն է ուսումնասիրել, թե ինչպես են դասավանդվում աստվածաշնչյան առակները և ինչ դեր ունեն դրանք սովորողի ուսումնական գործընթացի զարգացման և գիտելիքների ձևավորման վրա:

Հետազոտության կառուցվածքը: Աշխատանքը կազմված է ներածությունից, հիմնական գլուխներից, եզրակացությունից և օգտագործած գրականության ցանկից:

Աստվածաշնչյան առակների դաստիարակչական նշանակությունը

Աշխարհում տեղի ունեցող սոցիալ-տնտեսական ու մշակութային փոփոխություններն ամենաանմիջական կերպով ազդում են մարդկային կյանքի տարբեր ոլորտների վրա: Ազգային դիմագիծը պահպանելու համար հարկավոր է զգուշորեն մոտենալ հոգևոր ու մշակութային ավանդույթներին, որոնց միջոցով հնարավոր է հասարակության մեջ կայունություն պահպանել և հաջող կերպով դիմակայել ժամանակակից մարտահրավերներին: Հասարակությունների առջև ծառացած խնդիրներին խելացի լուծումներ են տվել Եկեղեցու հայրերը: Ըստ նրանց՝ կարևորագույն խնդիր է մարդու մեջ աստվածնմանության պատկերի վերականգնումը, ըստ այդմ էլ՝ կրթության վերջնական նպատակը պետք է լինի Աստծո հետ միավորումը և մարդու աստվածացումը:

Ինչի՞ մասին ես ուզում սովորել

Մեղսագործության ամենավտանգավոր հետևանքներից մեկն այն է, որ մարդու մեջ խաթարվեց աստվածային պատկերը և մարդու մեջ սկսվեց կատարվել այն, ինչի մասին Պողոս առաքյալն ասել է. «Բարին կամենում եմ անել, չեմ անում, այլ անում եմ չարը, որ չեմ կամենում անել» (Հռոմ. 7:19): Մարդը ծնվում է հավիտենության համար և որին հասնում է աստվածային ողորմածությամբ՝ հոգևոր կատարելագործման և աստվածճանաչողության ձգտման ուղին անցնելով: Այս ամենի մեջ է կայանում երկրային կյանքի իմաստը, այնինչ հաճախ մարդն իր ողջ կյանքը գործածում է միայն երկրայինն ըմբռնելու համար:

Տիեզերական Եկեղեցու խոշորագույն վարդապետներից մեկը՝ Ս. Կյուրեղ Ալեքսանդրացին, մանկավարժությամբ զբաղվողներին ասում է՝ եկեք առավել միանանք Եկեղեցու սուրբ մարմնին, վազենք դեպի նա, ինչպես փոքրիկ երեխան է վազում դեպի բարի մայրիկը. «Դառնալով Խոսքի ունկնդիրը՝ փառավորենք մեր փրկության տունը Կառուցողին, մեզ երանելի Դարձնողին, քանի որ երկրի վրա կրթության և դաստիարակության միջոցով է մարդը դառնում երկնքի քաղաքացի: Հոգևորականը, Տիրոջ խոսքի համաձայն, ստանձնում է նաև երեխաներին քրիստոնեաբար դաստիարակելու սուրբ պարտականությունը. «Գնացե՛ք, ուրեմն, և բոլոր ժողովուրդներին Իմ աշակերտները դարձրեք: ….սովորեցրե՛ք նրանց այն բոլորը պատվիրանները, որ տվեցի ձեզ» (Մատթ. 28:19)»:

Քրիստոնեության սկզբնավորման առաջին իսկ տարիներից Եկեղեցու հայրերն իրենց գրվածքներում առանձնահատուկ ուշադրություն են դարձրել երեխաների կրթությանն ու դաստիարակությանը: Նրանք դաստիարակությանը նայում էին հավիտենության տեսակետից և ծնողներին հորդորում էին իրենց զավակներին փոքրուց Աստծո երկյուղով մեծացնել: Եկեղեցու վաղքրիստոնեական շրջանի հայրերը նախատում էին այն ծնողներին, որոնք անփույթ էին երեխայի քրիստոնեական դաստիարակության հանդեպ: Նրանցից մեկը հորդորում էր և ասում. «Դո՛ւ, սիրելով քո երեխային, չխրատեցիր նրան, այլ թույլ տվեցիր, որ նա երես առնի: Այդ պատճառով Աստծո բարկությունը քեզ վրա բերեցիր: Մի՛ տարուբերվիր, այլ բարեհոգաբար ամրացրու քո ընտանիքը: Ինչպես դարբինը մուրճով աշխատելիս աստիճանաբար հասնում է

ցանկալի արդյունքին, այդպես և արդար խոսքը՝ ամեն օր ասված, կհաղթահարի ամեն տեսակի չարիք: Այդ պատճառով մի՛ դադարիր խրատել քո զավակներին»:

Հայրաբանական լույսի ներքո մանկավարժական արվեստը դեպի Քրիստոս է ուղղված: Քրիստոնեական դաստիարակությունն ուսուցանում և կրթում է հավատավոր հոգիներ, ինչը նախ և առաջ մարդուն տալիս է ներքին անհրաժեշտ հիմքը փրկության հասնելու համար, հիմք, որ դաստիարակության միջոցով օգնում է հաղթահարել կրքերը և ձեռք բերել բարի սովորույթներ: Ս. Կյուրեղ Ալեքսանդրիացին հարց է տալիս և պատասխանում՝ ի՞նչ է խոստանում սովորեցնել մեծ Ուսուցիչը. Նա ազատագրում է մարդուն աշխարհիկ սովորությունների գերությունից, որով մարդիկ բավարարվել են և կրթում է միակ ու հնարավոր փրկության համար: Նա մատնանշում է, որ գործնականը և ոչ տեսականը պետք է լինի մանկավարժական գործունեության դաշտը և ինչը պետք է նպաստի երեխայի բարոյական կյանքի զարգացմանը:

Ո՞րն է թեման կամ հիմնախնդիրը

Երեխայի կրթությունն ու դաստիարակությունը մեծագույն աշխատանք է, արվեստների մեջ ամենադժվարինը: «Ո՞ր արվեստը կարող է համեմատվել պատանու հոգու կրթության և մտքի լուսավորման արվեստի հետ: Այս արվեստին գիտակ անձը յուրաքանչյուր նկարչից և քանդակագործից առավել ուշադիր պետք է լինի, բայց այս ամենին շատ քչերն են անդրադառնում: Հոգ մի՛ տար, որ որդիդ հայտնի դառնա արտաքին գիտելիքներով և փառք ձեռք բերի, այլ ջա՛նք թափիր, որպեսզի նա փառքի գերին չդառնա և առավել փառքի կարժանանա: Այս մասին նա չի սովորելու աշխարհիկ ուսուցիչներից, այլ Սուրբ Գրքից: Երեխային բարի պահվածք է անհրաժեշտ և ոչ սրամտություն, բարոյականություն և ոչ թե խոսքի զորություն, գործեր և ոչ թե խոսքեր, այս ամենն են Արքայություն և իրական բարիք պարգևում»,- ասել է Ս. Հովհան Ոսկեբերանը:[1]

Հայրաբանությունը շեշտում է, որ երեխայի դաստիարակությամբ և կրթությամբ պետք է զբաղվել դեռ վաղ տարիքից, ինչպես փոքր ծառը որ ուղղությամբ թեքված լինի, այդպես էլ մինչև վերջ կաճի, այդպես էլ երեխան, ինչին, որ սովորեցնեն, դրան էլ կհակվի մինչև կյանքի վերջը: Երեխան կարող է դառնալ հրեշտակ կամ դև, ինչպիսի դաստիարկություն և խրատ ստանա, այդպիսին կլինի: Նախ և առաջ երեխայի միտքն անհրաժեշտ է զբաղեցնել աստվածաշնչյան պատմություններով և սրբերի վարքագրությամբ՝ աննկատելիորեն այնտեղ սերմանելով աստվածային երկյուղը:

Եկեղեցու հայրերը ցավալիորեն նկատում են, որ մանկավարժները հիմնականում կրթում են երեխայի միտքը՝ անտեսելով հոգևոր դաստիարակությունը: Ոչ միայն դպրոցական կրթությունն է համարվում մարդու հաջողության հիմքը, այլև պարկեշտ ու բարեպաշտ վարքը՝ աստվածային ճշմարտության և խղճի համաձայն: Մարդու կրթությունը կայանում է մտքի, կամքի, սրտի և միաժամանակ հոգու դաստիարակությամբ: Այն սկսվում է ընտանիքում, հետո տեղափոխվում դպրոց: Ռուս դեմոկրատ-մանկավարժ, գիտական մանկավարժության

[1] Սիրունի Հ., Եղիշե Պատրիարք Դուրյան, Պաշտօնական ամսագիր Հայրապետական Աթոռոյ Ս. Էջմիածնի, 1960, ԺԷ (Գ) http://echmiadzin.asj-oa.am/3371/1/23.pdf Հասանելիէ 8.23.2019

հիմնադիր, «ռուս ուսուցիչների ուսուցիչ» Կ. Դ. Ուշինսկին ասել է. «Ազգային դաստիարակությունը պետք է լուսավորվի եկեղեցով, իսկ դպրոցը պետք է լինի եկեղեցու նախադուռը»:

Դաստիարակությունը բոլոր սուրբ գործերից ամենասուրբն է: Եթե ծնողներն ու մանկավարժները երեխաների դաստիարակության և կրթության հարցում ցանկանում են լավագույն արդյունքի հասնել միայն աշխարհիկ կրթությամբ, ապա արդյունքն անխուսափելիորեն նրանց կհուսահատեցնի: Նման դաստիարակության պարագայում ինքնանպատակ է դառնում գիտելիքների ամբարումը, եթե չի զուգահեռվում հոգու ամրապնդման հետ: Այդ դեպքում երեխայի մոտ առաջ է գալիս ինքնահավանություն, փառասիրություն, հոգևոր խլություն, նախանձ և հոգու համար այլ կործանարար մոլություններ: Ամեն գիտություն պետք է դասավանդվի քրիստոնեական տեսանկյունից և միայն այդպիսի դասավանդումը գիտելիքը կդարձնի ամբողջական և ճշմարիտ:

Կրթությունն, ըստ Ս. Իոանն Կրոնշտադտացու, անբաժանելի է դաստիարակությունից: Դաստիարկությունը նրա կողմից ընդունվում է՝ որպես սրտի դաստիարակություն: Նա գտնում է, որ անհրաժեշտ է նախ ուսանել սրտի գիտությունը, այսինքն՝ սիրո, հավատի, աղոթքի և խոնարհության գիտությունը: Նա նշում է, որ կրթելիս չափազանց վտանգավոր է զարգացնել միայն բանականությունն ու միտքը՝ ուշադրություն չդարձնելով սրտին. «Հարկավոր է մաքուր պահել այս կյանքի աղբյուրը: Հասարակությունը բարոյազրկվել է քրիստոնեական դաստիարակության պակասից: Ժամանակն է գիտակցել, որ մեր սրտի ճշմարիտ կյանքը Քրիստոսն է: Քրիստոնեական ամուր հիմքերից զուրկ հոգին կարող է ավերիչ հետևանքներ ունենալ:

Հնարավոր է լինել գիտնական, բայց ավաղ ոչ պիտանի մարդ: Մենք պետք է կրթենք ոչ միայն հասարակության համար պիտանի և գիտնական անձանց, այլ բարի և Աստծո երկյուղն ունեցող քրիստոնյաների, ինչն առավել կարևոր է»:[2]

Երեխայի քրիստոնեական դաստիարակության գործին պետք է լծվեն թե՛ Եկեղեցին, թե՛ պետությունը, թե՛ ծնողներն ու մանկավարժները: Տարբեր ժամանակաշրջաններում ապրող Եկեղեցու հայրերը հասարակության կողմից անընդհատ հնչող դժգոհությունների վերաբերյալ ասել են. «Մենք դժգոհում ենք, որ չկան ուժեղ կամքով ու հոգով մարդիկ, դժգոհում ենք, որ քիչ են մարդիկ, որոնց կարելի է վստահել, քիչ են նրանք, ովքեր հանուն մերձավորի պատրաստ են ինքնազոհաբերման կամ սխրանքի: Կլռեն այս դժգոհությունները, եթե Աստծո խոսքը գործի պատանիների սրտում: Այդ դեպքում նրանց սիրտը կլինի ամուր, իսկ հավատքը՝ զորեղ»: Ոչինչ չի կարող փոխարինել Աստծո խոսքին, որ «կենդանի է և ազդու» (Եբր. 4:12), որը շնորհվել է մարդկությանը՝ որպես հավիտենություն տանող ճանապարհի ուղենիշ: Նա, ով ցանկանում է բանալ իր սիրտը ճշմարտությունն ուսանելու համար, նա՝ որպես իրապես կրթված անձ, դեռևս երկրի վրա հաղորդակից կլինի հավիտենական երանելի կյանքին:

Մեր ժամանակներում ավելի ու ավելի մտահոգիչ է դառնում մեր երեխաների դաստիարակության խնդիրը:

---

[2] http://www.surbzoravor.am/post/view/dastiarakutyan-hetevanqnery-erekhan-karogh-e-darnal-hreshtak-kam-dev

Աշխարհում այսքան սրբապիղծ եւ պղծամեծար ինֆորմացիայի առկայության մեջ շատ բարդ ու դժվարին է դառնում երեխաներին սրբության եւ ճշմարտության մեջ հաստատել, եթե ծնողները չունեն համապատասխան հոգեւոր գիտակցություն: Փոխարեն մենք մեր երեխաներին հորդորենք եկեղեցի հաճախել, իրենց նպաստն ու ներդրումը ունենալ եկեղեցական կյանքից ներս, որպեսզի կրթվեն ու դաստիարակվեն հավատքի, մաքրության, սրբության շավիղներում, հեռու մնան մեղքից ու նյութապաշտությունից, կոմպլեքսավորում ենք նրանց, հորդորում ենք, որ ընդամենը մոմ վառեն կամ ընդհանրապես չգնան եկեղեցի՝ այսպիսով հաստատելով մեր մեղավոր լինելը, որի մասին իմաստունն ասել է. «Մեղավորի համար աստվածպաշտությունը գարշելի է» (Սիրաքի իմաստ. 1; 29), եւ այդ գարշանքը փաթաթում ենք երեխաների վզին: Կտրում ենք նրանց մեր ազգային արմատներից, ավանդույթներից, եւ որ ավելի սարսափելի է, կտրում ենք Կյանքի Աղբյուրից՝ Քրիստոսից, սրբություններից, ու հետո տրտնջում նրանց վարքագծից: Առանց հոգեւոր-բարոյական գիտակցության մարդը նման է աշխարհին. բացի սրբությունից ինչ թափոն ասես կզարգանա նրա մեջ: Եթե մեր երեխաներին արգելում ենք ծառայել եկեղեցում, Քրիստոսին, մենք նրանց ակամա զոհ ենք մատուցում անօրեն բանսարկուին: Լավ սովորի, թե վատ, մեծանում է աշխարհ-թափոնի մեջ եւ հանուն այդ թափոնի՝ կորստյան մատնելով իր հոգին:

Եվ թող որ ծնողները ոչ ոքի, բացի իրենցից չմեղադրեն, եթե իրենց երեխան անուշադրության պատճառով վերածվի անպտուղ թզենու (Ղուկ. 13:6-9): Արդյո՞ք այդ ժամանակ նրանց էլ լսելի չի լինի Աստծո ահեղ ձայնը, որը Սամվել մարգարեն հայտնեց Հեղի քահանայապետին զավակների անփույթ դաստիարակության պատճառով. «…իր որդիների գործած անօրենությունների համար մինչեւ վերջ իր սերնդից վրեժ պիտի լուծեմ, որովհետեւ իր որդիները Աստծուն էին անարգում, իսկ նա նրանց չէր հանդիմանում» (Ա Թագ. 3:13): Ծնողները պետք է գիտակցեն, որ իրենց երեխաները թեեւ իրենցից առանձին անհատներ են, բայցեւ միաժամանակ իրենց շարունակությունն են՝ իրենց իսկ գեների եւ դաստիարակության կրողները: Եւ որքան ճիշտ նրանք դաստիարակվեն որպես շարունակություն, այնքան կմեծանա լավ անհատ դառնալու նրանց հնարավորությունը: Իսկ այդ հնարավորության մեծացմանը զուգահեռ ավելի որոշակի ու անշամանդաղ կդառնա մեր շարունակության ապագան:

Սուրբ Գիրքը պատվիրում է զավակներին հնազանդ լինել ծնողներին «Որդինե՛ր, հնազանդ եղեք ձեր ծնողներին ի Տեր» Եփես. 6:1-4, բայցեւ միաժամանակ ծնողներին պատվիրում է զավակներին դաստիարակել աստվածճանաչողության շրջանակներում:

Ծնողական սիրո եւ դաստիարակության անգերազանցելի օրինակ է ծառայում հենց ինքն Աստված. «քանզի Տերը ում սիրում՝ նրան խրատում է եւ պատժում նրան, ում ընդունում է որպես որդի»: (Առ. 3;11-12, «Թե խրատին համբերող եք, Աստված ձեզ կմոտենա իբրեւ որդիների: Ո՞րն է այն որդին, որին հայրը չի խրատում. որովհետեւ, եթե մնաք առանց խրատի, որին բոլորն են բաժնեկից, ապա խորթ էք եւ ոչ թե հարազատ որդի. հիրավի, եթե պատկառում ենք մեր մարմնավոր հայրերից, որոնք մեզ խրատում են, որչա՞փ եւս առաւել պետք է հնազանդվենք հոգիների Հորը, որ ապրենք. քանի որ սրանք մի փոքր ժամանակ եւ ըստ իրենց

կամեցողութեան են խրատում, իսկ Նա՝ մեր օգտի համար, որպեսզի հաղորդակից լինենք նրա սրբությանը: Ամեն խրատ տվյալ պահին ուրախություն չի թվում, այլ՝ տրտմություն, բայց հետո արդարության խաղաղարար պտուղն է հատուցում նրանով դաստիարակվածներին: Եբր.12;7-11:

«Բովանդակ իմաստությունը Տիրոջից է, եւ այն հավիտյան կմնա Նրա հետ» Սիրաք 1;1: Սուրբ Գիրքը իմաստության անսպառ աղբյուր է, որ կարող է մանկան հոգում սնել ու աճեցնել հավիտենության պտղառատ ծառը, բայց ծնողը պետք է ինքը առաջնորդի իր զավակին դեպի այդ աղբյուրը, եթե ծնողը թերանում է իր այդ պարտականության մեջ ոչ իր մեղքով, այսինքն՝ ոչ միտումնավոր, ապա Աստված ինքը երբեք չի անտեսում իր զավակներին:

«Երեխաները կյանքի առաջին տարիներից իսկ պետք է վարժվեն զբաղվել բացառապես նրանով, ինչն ուղղակի առաջնորդում է դեպի Աստված, այսինքն՝ Ս. Գրքի ընթերցանությամբ: Ըստ այդմ Աստվածաշունչը քրիստոնեական դպրոցների Ալֆան և Օմեգան պիտի հանդիսանա: Այս դպրոցներում թող Աստծո գիրքը գլխավոր տեղը զբաղեցնի մյուս բոլոր գրքերի շարքում, այնպես որ Տիմոթեոսի օրինակով մանկուց Ս. Գիրք սովորած բոլոր քրիստոնյա պատանիները խրատվեն բարեպաշտության մեջ (Բ. Տիմ. Գ.15) և կրթվեն հավատքի խոսքերով (Ա Տիմ. Դ 6)»:

Նորագույն մանկավարժության հիմնադիր Կոմենսկին քննադատում է իր ժամանակի դպրոցներում պատանեկության գրական կրթության եղանակը: Ըստ նրա՝ կա՛մ քրիստոնեական դպրոցներից լրիվ դուրս պիտի մղվեն հեթանոս հեղինակների ստեղծագործությունները, կամ էլ, ծայրահեղ դեպքում, չափազանց զգույշ օգտագործվեն: «Մեր երեխաները,- գրում է մեծ մանկավարժը,- ծնվել են երկնքի համար, վերածնվել Սուրբ Հոգով. ուստի և նրանք պետք է դաստիարակվեն իբրև ապագա երկնաքաղաքացիներ ու նախ և առաջ գիտելիքներ ձեռք բերեն երկնայինի, Աստծո, Քրիստոսի, հրեշտակների, Աբրահամի, Իսահակի, Հակոբի և այլոց մասին: Թեև Աստված շատ է հոգ տարել Իր ընտրյալ ժողովրդի մասին, սակայն չի նշել որևէ այլ դպրոց, քան այն, ուր Ինքն Իրեն ուսուցիչ է կարգել մեզ վրա, մեզ դարձրել Իր աշակերտները, մարգարեությունների ձայնը՝ Իր վարդապետությունը: Նրա խոսքը մեր ճանաչողության ճաճանչափայլ լույսն է, մեր արարքների ամենակատարյալ առաջնորդը և երկու դեպքում էլ մեր տկարությունների ամենահուսալի նեցուկը...

Ի՞նչ գիտես տվյալ թեմայի կամ հիմնախնդրի մասին

Մեր քրիստոնեական արժանապատվությունը (քանի որ Քրիստոսով Աստծո որդիներ ենք դարձել, ընդունել թագավորական քահանայությունն ու հավիտենականության ժառանգությունը) թույլ չի տալիս այնքան ցածրանալ ու այլասերել մեր անձերն ու մեր երեխաներին, որ սերտ հարաբերությունների մեջ մտնենք հեթանոսների հետ և նրանցով գայթակղվենք: Չէ՞ որ թագավորական ու իշխանական ընտանիքների երեխաների վրա դաստիարակներ չեն կարգում պորտաբույծներից, խեղկատակներից ու ծաղրածուներից, այլ լուրջ, խելացի ու հավատացյալ մարդկանցից: Իսկ մենք առանց ամաչելու Թագավորների թագավորի որդիներին՝ Քրիստոսի կրտսեր եղբայրներին՝ հավիտենականության ժառանգներին, դաստիարակելու ենք տալիս խեղկատակ Պլավտոսին, գայթակղիչ Կատուլլոսին, ամբարիշտ Օվիդիուսին, ամբարիշտ աստվածանարգ Լուկանոսին, անբարոյական Մարցիալիսին և

Ճշմարիտ Աստծուն չճանաչող ու Նրանից չերկյուղող սրանց նմանների ամբոխին: Քանի որ սրանք ապրեցին առանց լավագույն կյանք ունենալու հույսի՝ ոտից գլուխ ընկղմվելով իրական կյանքի տիղմի մեջ, ապա չեն կարող իրենց հետ չկեղտոտել նրանց, ովքեր չափազանց սերտ շփման մեջ են մտնում իրենց հետ: Օ՜հ, բավական է, շատ է խենթություն եղել, քրիստոնյաներ: Ժամանակն է վերջ տալու այս ամենին: Աստված կանչում է մեզ հետևելու բարուն. արժե անսալ այս կոչին:

Քրիստոսը՝ Աստծո հավիտենական իմաստությունը, Աստծո որդիների համար դպրոց է հիմնել Իր տանը, ուր ռեկտորի ու վարիչ-տնօրենի պաշտոնը ստանձնել է Ինքը՝ Սուրբ Հոգին, ուր ուսուցիչներին ու պրոֆեսորներին փոխարինում են մարգարեներն ու առաքյալները: Այստեղ բոլորն էլ օժտված են ճշմարիտ իմաստությամբ, բոլորն էլ խոսքով ու գործով մատնանշում են ճշմարտության և փրկության ճանապարհը, բոլորն էլ սուրբ այրեր են: Այստեղ աշակերտները միմիայն Աստծո ընտրյալներն են՝ մարդկանց անդրանիկները՝ Աստծո ու Աստծո Գառով թողություն ստացածները: Դպրոցի տեսուչներն ու պահակները հրեշտակներն են, հրեշտակապետերը, երկնային իշխանություններն ու պետությունները (Եփես. Գ 10): Այստեղ տրվում է ամենայն մարդկային մտքի եզրահանգումներից գերիվեր գիտելիք՝ ճշմարիտ, ստույգ ու կատարյալ՝ համահունչ ինչպես այս, այնպես էլ գալիք կյանքի կարիքներին: Քանզի միայն Աստծո շուրթերն են այն աղբյուրը, որից բխում են ճշմարիտ իմաստության բոլոր վտակները, միայն Աստծո երեսն է այն ջահը, որտեղից ճառագում են ճշմարիտ լույսի ճաճանչները, միայն Աստծո խոսքն ունի այն արմատը, որից աճում են ճշմարիտ իմաստության ծիլերը:»

Ի պատասխան այն առարկությունների, թե հեթանոս փիլիսոփաների, հռետորների և բանաստեղծների գրքերում մեծ իմաստություն է ամփոփված, Կոմենսկին ասում է. «Նրանք, ովքեր շրջում են հայացքները լույսից, արժանի են խավարի: Ճիշտ է, բուի համար մթնշաղն էլ կեսօր է, սակայն լույսի մեջ ապրելու ծնված կենդանիների համար դա այդպես չէ: Ո՜վ սին մարդ, դո՜ւ, որ լույս ես փնտրում մարդկային հասկացողության խավարում, վե՜ր բարձրացրու աչքերդ: Երկնքից՝ լույսի Աստծուց է բխում ճշմարիտ լույսը: Եթե մարդկայինի մեջ ինչ-որ բաներ էլ առկայծում կամ փայլում են, ապա դրանք այլ բան չեն, քան փոքրիկ կայծեր, որոնք թեև լուսավոր են թվում և ինչ-որ բան են իրենցից ներկայացնում խավարում նստածների համար, սակայն բոլորովին անպիտան են մեզ համար, ում ձեռքերին բռնելու են հանձնված Աստծո խոսքի վառ լույս ճառագող ջահերը: Բնության մասին մտորելիս՝ նրանք այս ու այն կողմ են ընկնում՝ բնավ հարցի էության մեջ չթափանցելով: Իսկ Ս. Գրքում Ինքը՝ բնության Տերը, բացահայտում է Իր գործերի մեծ գաղտնիքները՝ բացատրելով տեսանելի և անտեսանելի արարչագործության բոլոր պատճառները:

Երբ փիլիսոփաները խոսում են բարոյականության մասին, նմանվում են սոսնձով փակցված թևերով թռչնակների, որոնք մեծ դժվարությամբ են շարժվում, բայց և բնավ առաջ չեն գնում: Իսկ Ս. Գիրքը պարունակում է առաքինությունների ճշմարիտ նկարագրություններ համոզիչ, մինչև ուղն ու ծուծը թափանցող հորդորներով և այդ ամենի կենդանի օրինակներ: Այնուհետև նրանք ասում են. «Եթե հեթանոսների գրքերը ճշմարիտ աստվածաբանություն չեն

սովորեցնում, ապա փոխարենը փիլիսոփայություն են ուսուցանում, որին անհնար է հասու լինել փրկության համար շնորհված Ս. Գրքում»:

Պատասխանում եմ. «Իմաստության աղբյուրը Բարձրյալ Աստծո խոսքն է» (Սիրաք Ա 5): Ճշմարիտ փիլիսոփայությունը ոչ այլ ինչ է, եթե ոչ Աստծո և նրա արարածների ճշմարիտ ճանաչողություն, և անհնար է այն առավել ճշմարիտ ձևով որևէ այլ տեղից սովորել, քան Աստծո խոսքերից: Թվարկելով Ս. Գրքի առավելությունները, Օգոստինոս Երանելին այսպես է արտահայտվում. «Այստեղ է փիլիսոփայությունը, քանզի ամեն կեցության պատճառները Արարիչ Աստծո մեջ են: Այստեղ է բարոյագիտությունը, որովհետև լավ և ազնիվ կյանքն ամբողջանում է այն ժամանակ, երբ սիրում են այն, ինչ հարկ է սիրել, այսինքն՝ Աստծուն ու մերձավորին, և այնպես, ինչպես հարկ է սիրել:

Այստեղ է տրամաբանությունը, քանզի բանական հոգու ճշմարտությունն ու լույսն Աստված է: Այստեղ է նաև առավել գովասանքի արժանի պետական բարիքը, քանզի պետությունը լավագույնս պահպանվում է հավատքի և սերտ համաձայնության հիմքով ու միությամբ, ընդ որում սիրո նպատակը համընդհանուր բարիքն է, իսկ վսեմագույն ու ճշմարտագույն բարիքը Աստվածն է: Արդեն այս հարյուրամյակում ոմանք ապացուցել են, որ բոլոր փիլիսոփայական գիտությունների ու արվեստների հիմքն ավելի շատ Ս. Գրքում է, քան որևէ այլ տեղում: Սուրբ Հոգու տեսչությունը պարզապես զարմանք է հարուցում. ճիշտ է, Նա նախ և առաջ ձգտում է լուսավորել անտեսանելին ու հավիտենականը, սակայն, այդուհանդերձ, այստեղ ու այնտեղ բացահայտում է բնականն ու արհեստականը և առաջնորդում ամեն մի խոհեմ խորհուրդ ու արարք: Հեթանոս փիլիսոփաների մոտ հազիվ թե հանդիպի այս ամենի ստվերը»:

Հերքելով այն առարկությունները, թե պատանիները գոնե հանուն ոճագեղության պետք է կարդան և ուսումնասիրեն հեթանոս հեղինակներին, Կոմենսկին, ի միջի այլոց, նկատում է. «Մի՞թե միայն հեթանոսներն են ի զորու հասկանալու խոսքի նրբագեղությունը: Խոսքի ամենակատարյալ նկարիչը Նա է, Ով ցանել է այն, այսինքն՝ Սուրբ Հոգին, ՈՒՄ խոսքերը մեղրից քաղցր են, երկայրի սրից սուր, երկաթ հալեցնող հրից թեժ, ժայռեր փշրող մուրճից ծանր, որոնք ընկալում և ազդարարում են Աստծո սրբերը: Մի՞թե միայն հեթանոսներն են պատմում հիշարժան պատմություններ: Մեր Գիրքն առլեցուն է առավել ճշմարիտ ու զարմանահրաշ պատմություններով: Մի՞թե միայն նրանք կարող են փոխաբերություններ, դարձվածքներ, ակնարկներ, այլաբանություններ, առակներ ու ասույթներ գործածել: Այս ամենից լիուլի մենք էլ ունենք: Միայն բորոտը կարող է երևակայել, որ Դամասկոսի Նաբանա և Փարփարա գետերը Հորդանանից և Իսրայելի բոլոր ջրերից լավն են (Դ Թագ. Ե 12), կարճատեսը՝ որ Օլիմպոսը, Հելիկոնը, Պառնասն ավելի բարետես են, քան Սինայը, Սիոնը, Հերմոնը, Փավորան և Ձիթենյաց լեռը, միայն խուլը, որ Օրփեոսի, Հոմերոսի, Վերգիլիոսի քնարն ավելի քաղցրալուր է հնչում, քան Դավթի տավիղը: Միայն փչացած երկնքին նեկտարը, ամբրոսիան և կաստալյան աղբյուրները

կարող են ավելի համեղ թվալ, քան երկնային իսկական մանանան ու իսրայելական աղբյուրները:[3]

Միայն այլասերված սրտին կարող են ավելի մեծ հաճույք պատճառել չաստվածների, չաստվածուհիների, մուսաների և քարիսների անունները, քան Զորությունների Տիրոջ, Հիսուս Փրկչի երկրպագելի անունը և Ս. Հոգու բազմապիսի շնորհները: Միայն կույր հույսն է ավելի սիրահոժար ճախրում Էլիսիոնի դաշտերում, քան դրախտի այգիներում: Քանզի այնտեղ ամեն ինչ հեքիաթ է, ճշմարտության ստվեր, իսկ այստեղ՝ ճշմարտություն ու իրականություն...

Առարկում են, թե Աստվածաշնչի գրքերը չափազանց խրթին են պատանիների համար, և այդ իսկ պատճառով, քանի դեռ նրանց բանականությունը չի ձևավորվել, նրանց այլ գրքեր են առաջարկում: Պատիր է այն պնդումը, թե Ս. Գիրքը, չափազանց վսեմ լինելով, իբր մանկական ըմբռնումից գերիվեր է, կամ էլ, թե Աստված չի կարողացել հարմարեցնել իր խոսքը մեր ընկալմանը (Բ Օրենք ԼԱ 11-13): Չէ՞ որ Դավիթն ասում է. «Տիրոջ վկայությունը ստույգ է և իմաստուն է դարձնում տհասներին» (Սաղմ. Ժ 6-8), իսկ Պետրոս առաքյալն Աստծո խոսքն անվանում է «նորածին երեխաների կաթ»՝ շնորհված «նրա միջոցով փրկության համար աճելու» (տե՛ս Ա Պետ. Բ 2) և զորանալու:

Տես, ուրեմն, որ Աստծո խոսքն Աստծո կաթն է՝ շատ նուրբ, շատ քաղցր ու շատ օգտակար սնունդը, Աստծո նորածին երեխաների համար: Ինչո՞ւ հակառակել Աստծուն: Մանավանդ որ հեթանոսական կերակուրը կոշտ է և ամուր ատամներ է պահանջում, որոնք և, այնուամենայնիվ, կամաց-կամաց փշրում է: Այդ իսկ պատճառով Սուրբ Հոգին Դավթի շուրթերով երեխաներին կանչում է Իր դպրոցը. «Եկե՛ք, Իմ որդիներ, և լսեցե՛ք Ինձ. Ես կսովորեցնեմ ձեզ Տիրոջ երկյուղը» (Սաղմ. ԼԳ 12): Վերջապես կարող ենք խոստովանել, որ Ս. Գրքում, անշուշտ, խորություններ կան, սակայն այնպիսիք, որոնցում, ինչպես դիպուկ արտահայտվել է Օգոստինոս Երանելին, փղերն ընկղմվում են, իսկ գառնուկները՝ լողում: Այս խոսքը նա ասել է զուգահեռներ անցկացնելիս՝ Ս. Գրքի վրա մեծ հպարտությամբ հարձակումներ գործող այս աշխարհի իմաստունների ու Քրիստոսի որդիների միջև, ովքեր խոնարհ սրտով ու սովորելու պատրաստակամությամբ են ձեռնամուխ լինում Աստվածաշնչին: Իսկույն բաց ծովում լողալու անհրաժեշտություն չկա:

Կարելի է աստիճանաբար այդ անել: Սկզբում պետք է գնալ կատեխիզիսի վարդապետության ափով, ապա ծանծաղուտով՝ ուսումնասիրելով այն սրբազան պատմությունները, բարոյական ասույթները և այլն, որոնք դյուրամատչելի են և նախապատրաստում են առավել վսեմ հաջորդ բնագրերի ըմբռնումը: Ի վերջո երեխաներն ի զորու կլինեն լողալու նաև հավատքի խորհուրդների միջոցով: Այսպիսով, մանկուց անմնացորդ նվիրվելով Ս. Գրքի սերտմանը՝ նրանք ավելի դյուրին խույս կտան աշխարհի այլասերման որոգայթից և իմաստուն կդառնան «փրկության համար այն հավատի միջոցով, որ Քրիստոս Հիսուսի մեջ է» (Բ Տիմ. Գ 15): Քանզի նա, ով նվիրվում է Աստծուն և, նստելով Քրիստոսի ոտքերի մոտ, խոնարհեցնում իր ականջներն ի վերուստ իջնող իմաստությունը լսելու,

[3] Սիրունի Հ., Եղիշե Պատրիարք Դուրյան, Պաշտօնական ամսագիր Հայրապետական Աթոռոյ Ս. Էջմիածնի, 1960, ԺԷ (Գ) http://echmiadzin.asj-oa.am/3371/1/23.pdf Հասանելիէ 8.23.201

անպայման Սուրբ Հոգու շնորհներին կարժանանա՝ ճշմարիտ ճանաչողությամբ լուսավորվելու և հստակ լույսի ներքո փրկության շավիղները տեսնելու համար: Չեմ խոսում այն հեղինակների մասին, ում պարտադրում են քրիստոնյա պատանեկությանը (Տերենտիոս, Կիկերոն, Վերգիլիոս և այլք), ովքեր հենց այնպիսին են, ինչպիսին որ ցանկանում են ներկայացնել Ս. Գիրքը, այսինքն՝ խրթին ու դժվարըմբռնելի պատանիների համար: Չէ՞ որ դրանք երեխաների համար չեն գրված, այլ հասուն դատողության տեր մարդկանց, ովքեր շրջում են թատրոններում ու ֆորումներում: Հետևաբար, ինքնին հասկանալի է, որ դրանք այլոց համար բնավ էլ օգտակար չեն:

Անկասկած, մեծ տարիքում մեկ անգամ Կիկերոն ընթերցելն ավելի օգտակար է, քան, ասենք, պատանեկության տարիներին այն ծայրից ծայր անգիր անելը: Ինչո՞ւ այս հեղինակների ուսումնասիրությունը չհետաձգել մինչև մի հարմար ժամանակի նրանց համար, ովքեր դրա կարիքն ունեն, եթե դրա կարիքն առհասարակ կա: Ամենակարևորը, սակայն, ինչպես արդեն վերն ասել ենք, քրիստոնեական դպրոցներում երկնքի, այլ ոչ թե երկրի քաղաքացիներ պատրաստելն է: Այդ իսկ պատճառով անհրաժեշտ է այնպիսի ուսուցիչներ կարգել, ովքեր երկրայինից առավել երկնայինը, աշխարհիկից առավել սրբազանն ուսուցանեն»:

Չափազանց բարձր էր գնահատում Ս. Գիրքը նաև «ժամանակակից մանկավարժության հայրը»՝ Պեստալոցին (1746-1827): Իր հաստատության 1807 թ. ուսումնական տարվան նվիրված զեկույցներից մեկում նա հետևյալ խոսքերով է արտահայտվում աստվածաշունչ գրքերի դաստիարակչական նշանակության մասին. «Բոլոր բարձր դասարանների սաները շաբաթական երկու անգամ էին կրոն ուսանում: Իբրև ձեռնարկ ծառայում էին Մովսեսի սրբազան գրքերը, որոնցում շարադրված էր մարդկության կրոնական զարգացման ընթացքը, և նրանց վրա խարսխված Հիսուս Քրիստոսի սուրբ վարդապետությունը (այնպես, ինչպես Իր իսկ կողմից ներկայացված է Ավետարանում): [4]

Պարտականությունների մասին վարդապետության հիմքում մենք դրել ենք Հիսուսի Լեռան քարոզը, իսկ հավատքի վարդապետության հիմքում՝ առավելապես Հովհաննեսի Ավետարանը: Այս ամենն ընթերցվում էր մեկը մյուսի հետ փոխադարձ կապակցության մեջ. Քրիստոսի հավիտենական ճշմարտություններն Աստծո, Իր, իբրև մարմնացյալ Աստծո, առ Աստված մարդկության հարաբերության, Աստծո հետ կյանքի մասին, այս ամենը, հասկանալի է, որ յուրացվում էին: Մենք ձգտում ենք Քրիստոսի օրինակով, Նրա՝ իրերը, մարդկանց, նրանց հարաբերությունները հայելու եղանակով, երեխաների մեջ ակնառու կենդանացնել կրոնի աներկբա էության վրա հիմնված հավատքի, հույսի ու սիրո զգացմունքները, դրանք սովորություն դարձնել և զարգացնելով վսեմացնել նրանց միտքն ու գործերն այն աստիճան, որ նրանց մեջ ի հայտ գա ինքը Աստվածությունը»:

Ըստ ռուս ականավոր մանկավարժ Կ. Դ. ՈՒշինսկու (1824-1870)՝ միայն Ավետարանում է բացահայտված մարդու կյանքի ճշմարիտ նպատակը. «Մարդու կյանքի ճշմարիտ նպատակ պետք է ճանաչվի միայն այն, ինչն առավելագույնս համապատասխանում է մարդու հոգուն... Մենք ոչ մի տեղ չենք հանդիպում մարդու հոգու և նրա բնատուր հատկությունների այնպիսի

[4] Ամենայն հայոց հայրապետի կոնդակը Դուրյան Եղիշե պատրիարքի ծննդյան հարյուրամյակը նշելու մասին http://echmiadzin.asj-oa.am/3200/1/6.pdf Հասանելի է 8.23.2019:

խորունկ ըմբռնման, ինչպես քրիստոնեությունում է: Աշխարհի ո՞ր գիրքն է այդքան խոր հոգեբանություն, մարդկանց այդքան խոր ճանաչողություն պարունակում, որքան Ավետարանը»:

ՈՒշինսկին համոզված էր, որ Ավետարանն օժտված է հոգևոր ընկալման զարմանահրաշ մատչելիությամբ ոչ միայն մեծերի, այլև փոքրերի համար. «Ավետարանը ներգործում է տասնամյա երեխայի վրա, այդ բանը ես անձամբ զգացել եմ ինձ և երեխաների վրա»:

Եզրակացություն

Ավետարանական էջերի բացահայտումը մեկնիչը կատարել է բնության տարբեր երևույթների պարզաբանման եղանակով, որն այսօր կարևորվում է միջգիտակարգային ուսումնասիրությունների շրջանակներում:

Դաստիարակությունը բոլոր սուրբ գործերից ամենասուրբն է: Եթե ծնողներն ու մանկավարժները երեխաների դաստիարակության և կրթության հարցում ցանկանում են լավագույն արդյունքի հասնել միայն աշխարհիկ կրթությամբ, ապա արդյունքն անխուսափելիորեն նրանց կհուսահատեցնի: Նման դաստիարակության պարագայում ինքնանպատակ է դառնում գիտելիքների ամբարումը, եթե չի զուգահեռվում հոգու ամրապնդման հետ: Այդ դեպքում երեխայի մոտ առաջ է գալիս ինքնահավանություն, փառասիրություն, հոգևոր խլություն, նախանձ և հոգու համար այլ կործանարար մոլություններ: Ամեն գիտություն պետք է դասավանդվի քրիստոնեական տեսանկյունից և միայն այդպիսի դասավանդումը գիտելիքը կդարձնի ամբողջական և ճշմարիտ:

Մեր ժամանակներում ավելի ու ավելի մտահոգիչ է դառնում մեր երեխաների դաստիարակության խնդիրը:

Աշխարհում այսքան սրբապիղծ եւ պղծամեծար ինֆորմացիայի առկայության մեջ շատ բարդ ու դժվարին է դառնում երեխաներին սրբության եւ ճշմարտության մեջ հաստատել, եթե ծնողները չունեն համապատասխան հոգեւոր գիտակցություն: Փոխարեն մենք մեր երեխաներին հորդորենք եկեղեցի հաճախել, իրենց նպաստն ու ներդրումը ունենալ եկեղեցական կյանքից ներս, որպեսզի կրթվեն ու դաստիարակվեն հավատքի, մաքրության, սրբության շավիղներում, հեռու մնան մեղքից ու նյութապաշտությունից, կոմպլեքսավորում ենք նրանց, հորդորում ենք, որ ընդամենը մոմ վառեն կամ ընդհանրապես չգնան եկեղեցի՝ այսպիսով հաստատելով մեր մեղավոր լինելը, որի մասին իմաստունն ասել է. «Մեղավորի համար աստվածպաշտությունը գարշելի է» (Սիրաքի իմաստ. 1; 29), եւ այդ գարշանքը փաթաթում ենք երեխաների վզին:

Օգտագործված գրականության ցանկ

1. Սիրունի Հ., Եղիշե Պատրիարք Դուրյան, Պաշտօնական ամսագիր Հայրապետական Աթոռոյ Ս. Էջմիածնի, 1960, ԺԷ (Գ) http://echmiadzin.asj-oa.am/3371/1/23.pdf Հասանելիէ 8.23.2019
2. http://www.surbzoravor.am/post/view/dastiarakutyan-hetevanqnery-erekhan-karogh-e-darnal-hreshtak-kam-dev
3. Ամենայն հայոց հայրապետի կոնդակը Դուրյան Եղիշե պատրիարքի ծննդյան հարյուրամյակը նշելու մասին http://echmiadzin.asj-oa.am/3200/1/6.pdf Հասանելի է 8.23.2019: